

**«ՄԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ
Վարկային Կազմակերպություն ՍՊԸ**

Ֆինանսական հաշվետվություններ

**2010թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	9



KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-Էն-Ջի Արմենիա ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0010
Վ.Արարատյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone: Հեռախոս + 374 (10) 566 762
Fax: Ֆաքս + 374 (10) 566 762
Internet: Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՄԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
Ղեկավար խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՄԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Կազմակերպություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2010թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Սույն ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, նրա կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել Կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների նպատակահարմարության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2010թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Մ Ս. Գևորգյան

Էնդրյու Քոքսշել
Տնօրեն

KPMG Armenia cpjsc

«Քեյ-Փի-Էմ-Չի Արմենիա» ՓԲԸ
15 հունիսի 2011թ.



Ս. Գևորգյան

Տիգրան Գասպարյան
Ատոլիտի բաժնի ղեկավար

«ՄԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթգ.	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	4	531,921	560,984
Տոկոսային ծախս	4	(221,596)	(277,652)
Զուտ տոկոսային եկամուտ		310,325	283,332
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ		117,653	59,321
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		(9,399)	(8,450)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		108,254	50,871
Զուտ վնաս շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		-	(1,535)
Զուտ շահույթ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից	5	2,954	(107,342)
Այլ գործառնական եկամուտ	6	51,658	145,882
Գործառնական եկամուտ		473,191	371,208
Արժեզրկումից կորուստներ	7	(28,858)	(84,505)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(436,747)	(343,039)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		7,586	(56,336)
Շահութահարկի գծով ծախս	9	(5,287)	(13,041)
Շահույթ/(վնաս) տարվա համար		2,299	(69,377)
Այլ համապարփակ եկամուտ տարվա համար			
Հիմնական միջոցների վերագնահատում, առանց հարկերի		-	1,306
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		2,299	(68,071)

5-ից 50-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ղեկավար խորհրդի կողմից 2011թ. հունիսի 15-ին:




 Իրինա Օհանյան
 Գլխավոր հաշվապահ

«ՄԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթգ.	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Գրանական միջոցներ և դրանց համարժեքներ	10	146,859	103,252
Ժամկետային ավանդներ քանկերում	11	321,956	1,082,014
Հաճախորդներին տրված վարկեր	12	2,781,795	2,046,855
Ընթացիկ հարկային ակտիվ		8,291	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	81,145	82,702
Հետաձգված հարկային ակտիվ	9	9,739	10,056
Այլ ակտիվներ		11,931	7,363
Ընդամենը ակտիվներ		3,361,716	3,332,242
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վարկեր և փոխառություններ	14	2,263,572	2,454,413
Ընթացիկ հարկային պարտավորություն		-	7,586
Այլ պարտավորություններ	15	156,371	71,183
Ընդամենը պարտավորություններ		2,419,943	2,533,182
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	16	829,652	764,968
Հիմնական միջոցների վերագնահատումից աճ		666	1,311
Լրացուցիչ կապիտալ		78,271	2,541
Չբաշխված շահույթ		33,184	30,240
Ընդամենը սեփական կապիտալ		941,773	799,060
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		3,361,716	3,332,242

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«ՄԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին
 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված տոկոսներ	553,844	542,349
Վճարված տոկոսներ	(218,643)	(283,042)
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ	117,653	59,321
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	(9,399)	(8,450)
Չուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով	-	(8,341)
Չուտ մուտքեր/(ելքեր) արտարժույթով գործառնություններից	1,556	(2,357)
Չուտ այլ ստացված գումարներ	25,576	130,071
Ընդհանուր վարչական ծախսերի վճարում	(404,307)	(310,411)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Ժամկետային ավանդներ բանկերում	729,861	(110,224)
Հաճախորդներին տրված վարկեր	(775,919)	421,566
Այլ ակտիվներ	(782)	(711)
Գործառնական պարտավորությունների աճ		
Այլ պարտավորություններ	48,421	7,658
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը	67,861	437,429
Վճարված շահութահարկ	(20,847)	(4,676)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր	47,014	432,753
ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(27,357)	(19,470)
Մուտքեր հիմնական միջոցների օտարումից	10,803	4,420
Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր	(16,554)	(15,050)
ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված վարկեր և փոխառություններ	1,421,879	644,637
Վարկերի և փոխառությունների մարում	(1,538,891)	(1,161,271)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	64,684	-
Մուտքեր բաժնետիրական կապիտալի գծով կանխավճարներից	75,730	-
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ (օգտագործված) դրամական միջոցների հոսքեր	23,402	(516,634)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	53,862	(98,931)
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(10,255)	43,314
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	103,252	158,869
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	10 146,859	103,252

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«ՄԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
Մեֆական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Բաժնետիրական կապիտալ հազ. դրամ	Հիմնական միջոցների վերագնահատումից աճ հազ. դրամ	Լրացուցիչ կապիտալ հազ. դրամ	Չբաշխված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը առ 1 հունվարի 2009թ.	512,160	43	14,787	99,579	626,569
Ընդամենը համապարփակ եկամուտ					
Վնաս տարվա համար	-	-	-	(69,377)	(69,377)
Այլ համապարփակ եկամուտ					
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի իրացում	-	(38)	-	38	-
Հիմնական միջոցների վերագնահատում՝ առանց հարկերի	-	1,306	-	-	1,306
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	1,268	-	38	1,306
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	1,268	-	(69,339)	(68,071)
Ուղղակիորեն սեփական կապիտալում գրանցված գործարքներ սեփականատերերի հետ					
Թողարկված բաժնետոմսեր	240,562	-	-	-	240,562
Լրացուցիչ կապիտալի փոխանցում բաժնետիրական կապիտալ (ծնթգ. 16)	12,246	-	(12,246)	-	-
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	252,808	-	(12,246)	-	240,562
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.	764,968	1,311	2,541	30,240	799,060
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	764,968	1,311	2,541	30,240	799,060
Ընդամենը համապարփակ եկամուտ					
Շահույթ տարվա համար	-	-	-	2,299	2,299
Այլ համապարփակ եկամուտ					
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի իրացում	-	(645)	-	645	-
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	(645)	-	645	-
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	(645)	-	2,944	2,299
Ուղղակիորեն սեփական կապիտալում գրանցված գործարքներ սեփականատերերի հետ					
Թողարկված բաժնետոմսեր	64,684	-	-	-	64,684
Բաժնետիրական կապիտալի գծով կատարած կանխավճար	-	-	75,730	-	75,730
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	64,684	-	75,730	-	140,414
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	829,652	666	78,271	33,184	941,773

Մեֆական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Կազմակերպության հիմնական գործունեությունը

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Կազմակերպություն») Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2003թ-ին՝ որպես «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի իրավահաջորդ, որը ներգրավված է եղել միկրոֆինանսավորման գործունեությունում Հայաստանում 1998թ-ից: Կազմակերպության հիմնական գործունեությունը միկրոֆինանսավորման, անհատական բիզնես վարկերի և սպառողական վարկերի տրամադրումն է: Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Կազմակերպությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա:

Կազմակերպությունն ունի վեց մասնաճյուղ և երեք ներկայացուցչություն, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0070, Երվանդ Քոչարի փ. 19/19:

Կազմակերպությունն ամբողջովին պատկանում է «Վիժն Ֆանդ Ինտերնեյշնլ» ընկերությանը: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 22-ում:

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանում տեղի են ունենում քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Այդ իսկ պատճառով, Հայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությանը հատուկ են ռիսկեր, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ի լրումն, կապիտալի և վարկային շուկաներում տեղի ունեցած ճգնաժամը և դրա ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա ավելի է բարձրացրել տնտեսական անորոշության մակարդակը գործարար միջավայրում: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության ֆինանսական վիճակի և գործառնությունների վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

(բ) Զափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ համակարգչային սարքավորումների, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով:

(զ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Կազմակերպության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Դրամը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս փոխարկելի արժույթ չէ:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների ու ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 13-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր» վարկերի արժեզրկման գնահատման հետ կապված և ծանոթագրություններ 11-ում ու 14-ում՝ նմանատիպ պայմաններով նույն բանկերին տրված վարկերի և այդ բանկերից ստացված ավանդների համախառն հիմունքով ներկայացման հետ կապված:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած շահույթը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը: Իրական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

(բ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները և բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(գ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված են և հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ), կամ
- սկզբնական ճանաչման պահին Կազմակերպության կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանալիս այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման պահին: Ածանցյալ ֆինանսական գործիքները և որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ նախատեսված գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերդասակարգվում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Կազմակերպությունը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ

ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների դասից միայն հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնց Կազմակերպությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնց Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք գծով Կազմակերպությունը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Կազմակերպությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Կազմակերպությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնց Կազմակերպությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(ii) Ծանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեգրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(iv) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեք է համարվում այն գումարը, որով ակտիվը կարող է փոխանակվել կամ պարտավորությունը՝ մարվել իրազեկ, պատրաստական կողմերի միջև՝ «անկախ կողմերի միջև գործարքում» չափման ամսաթվի դրությամբ:

Հնարավորության դեպքում Կազմակերպությունը գործիքի իրական արժեքը չափում է ելնելով գործող շուկայում այդ գործիքի համար գնանշված գներից: Շուկան համարվում է գործող, եթե գնանշված գները հեշտորեն ու կանոնավոր կերպով հասանելի են և իրենցից ներկայացնում են փաստացի ու կանոնավոր կերպով շուկայում տեղի ունեցող «անկախ կողմերի միջև գործարքներ»:

Եթե ֆինանսական գործիքի շուկան գործող շուկա չէ, ապա Կազմակերպությունը որոշում է իրական արժեքը՝ օգտագործելով գնահատման տեխնիկա: Գնահատման տեխնիկաները ներառում են շուկայում վերջերս կատարված իրազեկ, պատրաստական «անկախ կողմերի միջև գործարքների» օգտագործումը (դրանց առկայության դեպքում), մեկ այլ էականորեն չտարբերվող գործիքի ընթացիկ իրական արժեքին հղումը, զեղչված դրամական հոսքերի վերլուծությունը և օպցիոնների գնահատման մոդելները: Ընտրված գնահատման մեթոդը որպես մուտքային տվյալներ առավելագույնս օգտագործում է շուկայական տվյալները և նվազագույնս հիմնվում է Կազմակերպությանը յուրահատուկ գնահատականների վրա, ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնենին գինը որոշելիս, և համապատասխանում է ֆինանսական գործիքների գնահատման ընդունված տնտեսագիտական մեթոդաբանություններին: Գնահատման տեխնիկայի մուտքային տվյալները խելամտորեն ներկայացնում են շուկայի սպասումները և ֆինանսական գործիքին ներհատուկ ռիսկ-հատույց գործոնների չափումները:

Ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչման ժամանակ դրա իրական արժեքի լավագույն վկայությունը գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը, բացառությամբ եթե այդ գործիքի իրական արժեքի մասին վկայությունը ստացվում է նույն գործիքի գծով (այսինքն՝ առանց վերափոխման կամ «վերափաթեթավորման») այլ դիտարկելի ընթացիկ շուկայական գործարքների հետ համեմատության միջոցով, կամ գնահատման մի մոդելի հիման վրա, որի փոփոխականները ներառում են տվյալներ միայն դիտարկելի շուկաներից: Եթե գործարքի գինը տրամադրում է իրական արժեքի լավագույն վկայությունը սկզբնական ճանաչման ժամանակ, ապա ֆինանսական գործիքը սկզբնապես չափվում է գործարքի գնով, և այս գնի ու գնահատման մոդելի կիրառման արդյունքում սկզբնապես ձեռքբերված արժեքի տարբերությունը հետագայում ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ, քան գնահատման ամբողջական հիմնավորումը դիտարկելի շուկայական տվյալներով կամ գործարքի ավարտը:

Ակտիվները և երկար դիրքերը չափվում են առքի գնով, պարտավորությունները և կարճ դիրքերը չափվում են վաճառքի գնով: Երբ Կազմակերպությունն ունի միմյանց չեզոքացնող ռիսկերով դիրքեր, այն միջին շուկայական գներն օգտագործում է որպես հիմք՝ չեզոքացնող ռիսկային դիրքերը չափելու համար, և առքի կամ վաճառքի գնի գծով ճշգրտումը համապատասխանաբար կիրառում է միայն զուտ բաց դիրքի նկատմամբ: Իրական արժեքն արտացոլում է գործիքի վարկային ռիսկը և ներառում է ճշգրտումներ գործարքի կողմի վարկային ռիսկը հաշվի առնելու համար՝ անհրաժեշտության դեպքում: Մոդելների օգտագործման արդյունքում ստացված իրական արժեքի գնահատականները ճշգրտվում են ցանկացած այլ գործոնների հետ կապված՝ այդ թվում իրացվելիության ռիսկի կամ մոդելի անորոշության հետ կապված, այնքանով, որքանով Կազմակերպությունը գտնում է, որ երրորդ անձ հանդիսացող շուկայի մասնակիցը կարող է դրանք հաշվի առնել գործարքի գինը որոշելիս:

(v) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ եկամուտ (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(vi) Ապաճանաչում

Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Կազմակերպությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Կազմակերպության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Կազմակերպությունը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Գործարքներում, որոնցում Կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Կազմակերպությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Կազմակերպությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(vii) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(դ) Հիմնական միջոցներ

(i) Մեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, բացառությամբ համակարգչային սարքավորումների, որոնք արտացոլվում են վերագնահատված արժեքով, ինչպես ներկայացված է ստորև:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

(ii) Վերագնահատում

Համակարգչային սարքավորումները ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա շենքերի իրական արժեքների շարժից: Երբ համակարգչային սարքավորման հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ եկամուտ՝ ուղղակիորեն սեփական կապիտալում: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ համակարգչային սարքավորման հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի սեփական կապիտալում որպես այլ համապարփակ եկամուտ ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

(iii) Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Վարձակալված գույքի գծով կատարած բարելավումների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- | | |
|------------------------------------|-------------|
| – շենքեր | 20 տարի |
| – համակարգչային սարքավորումներ | 1-ից 5 տարի |
| – փոխադրամիջոցներ | 7 տարի |
| – վարձակալված գույքի բարելավումներ | 5 տարի |
| – այլ | 3-ից 5 տարի |

(ե) Ոչ նյութական ակտիվներ

Կազմակերպության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման ծախսեր:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Համակարգչային ծրագրերի օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:

(գ) Արժեզրկում

(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Կազմակերպությունը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի վարկի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, վարկի կամ փոխառության պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեքի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Կազմակերպությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Կազմակերպությունը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տվյալների հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ կազմակերպություններին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Կազմակերպությունն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Կազմակերպությունը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը գեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինե՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինե:

(է) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Կազմակերպությունը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են գեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով գեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(ը) Վարկավորման պարտավորվածություններ

Բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունը հանձն է առնում վարկավորման պարտավորվածություններ, որոնք ներառում են չօգտագործված վարկային պարտավորվածությունները:

Վարկավորման պարտավորվածությունները չեն ճանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- վարկավորման պարտավորվածություններ, որոնք Կազմակերպությունը նախատեսում է որպես ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- եթե Կազմակերպությունն ունի իր վարկավորման պարտավորվածություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց վաճառելու նախկին պրակտիկա, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկավորման պարտավորվածությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,
- վարկավորման պարտավորվածություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածություններ:

(թ) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերին ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

(i) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Կազմակերպության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

Շահաբաժիններից ստացված եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում շահաբաժնի հայտարարման օրը:

(ժ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ եկամտի միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկի գծով ծախսը տարվա հարկվող շահույթի գծով վճարվելիք հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ հարկային նպատակներով չնվազեցվող գույքի, հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա ազդեցություն չունեցող ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում: Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային օգուտը կիրացվի:

(ի) Եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում ենք շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(լ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Կազմակերպության գործունեության վրա: Կազմակերպությունը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ: Կազմակերպությունը դեռ չի վերլուծել այդ ստանդարտների և դրանց փոփոխությունների հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

- Վերանայված ՀՀՍՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ» (2009թ.) ստանդարտը ներկայացնում է կապակցված կողմերի հետ գործարքների և դրանց մնացորդների բացահայտման հիմնական պահանջների հետ կապված բացառությունը, ներառյալ պարտավորվածությունները, կառավարության հետ առնչություն ունեցող կազմակերպությունների համար: Ի լրումն, ստանդարտը վերանայվել է ներկայացման որոշ պահանջներ հեշտացնելու նպատակով, որոնք նախկինում պարտադիր չէին հանդիսանում: Վերանայված ստանդարտը պետք է կիրառվի հետագարձ հիմունքով 2011թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:
- ՖՀՍՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը կգործի 2013թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը կիրառարակվի մի քանի փուլերով, և ենթադրվում է, որ կփոխարինի ՀՀՍՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտը ծրագրի ավարտից հետո՝ մինչև 2010թ. վերջը: ՖՀՍՍ 9-ի առաջին մասը, որը վերաբերում է ֆինանսական ակտիվների ճանաչմանը և չափմանը, հրապարակվեց 2009թ. նոյեմբերին: Երկրորդ մասը, որը վերաբերում է ֆինանսական պարտավորությունների դասակարգմանը և չափմանը, հրապարակվեց 2010թ. հոկտեմբերին: Ակնկալվում է, որ ստանդարտի մնացած մասերը կիրառարակվեն 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում: Կազմակերպությունն ընդունում է, որ նոր ստանդարտը նախատեսում է բազմաթիվ փոփոխություններ ֆինանսական գործիքների հաշվառման համար և հավանական է, որ էական ազդեցություն կունենա Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա: Այս փոփոխությունների ազդեցությունը կվերլուծվի ստանդարտի հաջորդ փուլերի հրապարակմանը զուգընթաց:
- «2010թ. ՖՀՍՍ-ների կատարելագործումները», որոնք ընդունվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից ՖՀՍՍ-ների կատարելագործման ծրագրի երրորդ տարեկան ժողովի ընթացքում, դիտարկվում են առանձին՝ յուրաքանչյուր ստանդարտի հիմունքով: Յուրաքանչյուր փոփոխության ուժի մեջ մտնելու ամսաթիվն առանձին ներառված է համապատասխան ստանդարտում:

4 Չուտ տոկոսային եկամուտ

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	498,589	504,622
Ժամկետային ավանդներ բանկերում	33,332	56,362
	531,921	560,984
Տոկոսային ծախս		
Վարկեր և փոխառություններ	221,596	277,652

5 Չուտ շահույթ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Չուտ շահույթ/(վնաս) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	1,398	(104,985)
Շահույթ/(վնաս) սփոթ գործարքներից	1,556	(2,357)
	2,954	(107,342)

6 Այլ գործառնական եկամուտ

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Ստացված տույժեր և տուգանքներ	23,860	16,322
Շահույթ հիմնական միջոցների օտարումից	10,308	4,124
Նվիրատվություններ	9,104	122,898
Այլ	8,386	2,538
	51,658	145,882

7 Արժեզրկումից կորուստներ

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	28,193	84,538
Այլ ակտիվներ	665	(33)
	28,858	84,505

8 Ընդհանուր վարչական ծախսեր

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Աշխատակիցների հատուցումներ	245,078	196,865
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	37,221	20,798
Մաշվածություն և ամորտիզացիա	28,419	26,575
Աշխատավարձին վերաբերող հարկեր	23,811	19,226
Վերանորոգման և պահպանման ծախսեր	23,445	16,467
Մասնագիտական ծառայություններ	18,998	14,907
Հաղորդակցության ծառայություններ	13,385	10,784
Անվտանգության ծառայություն	5,938	3,516
Գործուղման ծախսեր	3,770	8,903
Գովազդ և շուկայավարում	3,478	2,108
Ապահովագրություն	1,066	1,077
Այլ	32,138	21,813
	436,747	343,039

Աշխատակազմի գծով ընդհանուր ծախսերը, ներառյալ կարճաժամկետ հատուցումները և սոցիալական ապահովության գծով ծախսերը, կազմում են 268,889 հազար դրամ (2009թ-ին՝ 216,091 հազար դրամ) հաշվետու տարվա համար:

9 Շահութահարկի գծով ծախս

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	4,970	17,684
	4,970	17,684
Հետաձգված հարկի գծով ծախս/ (եկամուտ)		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	317	(4,643)
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	5,287	13,041

2010թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի համար Կազմակերպության նկատմամբ կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2009թ-ին՝ 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2010թ. հազ. դրամ	%	2009թ. հազ. դրամ	%
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	7,586		(56,336)	
Շահութահարկի հաշվարկ կիրառելի հարկային դրույքով	1,517	20%	(11,267)	20%
Չնվազեցվող ծախսեր	3,770	50%	24,308	(43%)
	5,287	70%	13,041	(23%)

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող արժեքների ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ 2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս հետաձգված հարկային ակտիվները ճանաչվել են սույն ֆինանսական հաշվետվություններում: Ապագա հարկային օգուտները կիրացվեն միայն այն դեպքում, երբ առկա լինի շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել չօգտագործված հարկային վնասները, և եթե օրենքներում ու կանոնակարգերում չեն կատարվի այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ապագա ժամանակաշրջաններում նվազեցումներ պահանջելու Կազմակերպության կարողության վրա:

Այս ժամանակավոր տարբերությունների գործողության ժամկետը համաձայն գործող օրենսդրության սահմանափակ չէ:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2010թ. և 2009թ. ընթացքում:

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(199)	(81)	(280)
Ժամկետային ավանդներ բանկերում	(2,097)	1,465	(632)
Հաճախորդներին տրված վարկեր	5,000	(1,289)	3,711
Հիմնական միջոցներ	(328)	162	(166)
Այլ ակտիվներ	(63)	111	48
Այլ պարտավորություններ	7,743	(685)	7,058
	10,056	(317)	9,739

հազ. դրամ	Մնացորդը առ 1 հունվարի 2009թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ եկամտում ճանաչված	Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(313)	114	-	(199)
Ժամկետային ավանդներ բանկերում	(1,405)	(692)	-	(2,097)
Հաճախորդներին տրված վարկեր	-	5,000	-	5,000
Հիմնական միջոցներ	(11)	10	(327)	(328)
Այլ ակտիվներ	(68)	5	-	(63)
Այլ պարտավորություններ	7,359	384	-	7,743
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	178	(178)	-	-
	5,740	4,643	(327)	10,056

Այլ համապարփակ եկամտում ճանաչված շահութահարկ

Ստորև ներկայացված են այլ համապարփակ եկամտի տարրերին վերաբերող հարկային հետևանքները դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

հազ. դրամ	2009թ.		
	Գումարը մինչև հարկումը	Հարկի գծով ծախս	Գումարը հարկումից հետո
Հիմնական միջոցների վերագնահատում	1,633	(327)	1,306

10 Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	6,866	3,992
Ընթացիկ հաշիվներ		
10 խոշորագույն հայկական բանկեր	139,696	99,218
Այլ հայկական բանկեր	297	42
Ընդամենը ընթացիկ հաշիվներ	139,993	99,260
Գրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում	146,859	103,252

Գրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի այնպիսի բանկեր, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

11 Ժամկետային ավանդներ բանկերում

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
10 խոշորագույն հայկական բանկեր	67,548	967,294
Այլ հայկական բանկեր	254,408	114,720
	321,956	1,082,014

Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 61,785 հազար դրամ գումարով ավանդները (2009թ-ին՝ 472,363 հազար դրամ) գրավադրված են ծանոթագրություն 14-ում ներկայացված բանկերից ստացված վարկերի դիմաց:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը միջոցներ ունի տեղաբաշխված մեկ բանկում (2009թ-ին՝ երեք բանկում), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում է 254,408 հազար դրամ (2009թ-ին՝ 1,082,014 հազար դրամ):

12 Հաճախորդներին տրված վարկեր

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Բիզնես վարկեր		
Վարկեր փոքր ընկերություններին և անհատ ձեռներեցներին	868,802	912,613
Ընդամենը բիզնես վարկեր	868,802	912,613
Անհատներին տրված վարկեր		
Սպառողական ապարնքների ձեռքբերման ֆինանսավորում	687,537	-
Այլ սպառողական վարկեր	568,324	460,712
Գյուղատնտեսական վարկեր	514,983	649,414
Վերանորոգման վարկեր	218,029	101,694
Ընդամենը անհատներին տրված վարկեր	1,988,873	1,211,820
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	2,857,675	2,124,433
Արժեզրկման գծով պահուստ	(75,880)	(77,578)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	2,781,795	2,046,855

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2010թ. ընթացքում:

	Բիզնես վարկեր հազ. դրամ	Անհատներին տրված վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբին	22,706	54,872	77,578
Զուտ (վերականգնում)/ծախս	(5,982)	34,175	28,193
Դուրս գրումներ	3,969	(33,860)	(29,891)
Մնացորդը տարեվերջին	20,693	55,187	75,880

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի դասերի 2009թ. ընթացքում:

	Բիզնես վարկեր հազ. դրամ	Անհատներին տրված վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը տարեսկզբին	12,542	29,396	41,938
Զուտ ծախս	16,056	68,482	84,538
Դուրս գրումներ	(5,892)	(43,006)	(48,898)
Մնացորդը տարեվերջին	22,706	54,872	77,578

(ա) Հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Քիզմես վարկեր				
Վարկեր փոքր ընկերություններին և անհատ ձեռներեցներին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր				
- ոչ ժամկետանց	798,810	6,391	792,419	0.8%
- մինչև 90 օր ժամկետանց	29,370	1,900	27,470	6.5%
- 90 օրից ավել և 1 տարուց պակաս ժամկետանց	40,622	12,402	28,220	30.5%
Ընդամենը քիզմես վարկեր փոքր ընկերություններին և անհատ ձեռներեցներին	868,802	20,693	848,109	2.4%
Անհատներին տրված վարկեր				
Սպառողական ապարնքների ձեռքբերման ֆինանսավորում				
- ոչ ժամկետանց	687,537	5,497	682,040	0.8%
Ընդամենը սպառողական ապարնքների ձեռքբերման ֆինանսավորում	687,537	5,497	682,040	0.8%
Այլ սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	568,324	4,547	563,777	0.8%
Ընդամենը այլ սպառողական վարկեր	568,324	4,547	563,777	0.8%
Գյուղատնտեսական վարկեր				
- ոչ ժամկետանց	472,811	13,116	459,695	2.8%
- մինչև 90 օր ժամկետանց	18,612	12,016	6,596	64.6%
- 90 օրից ավել և 1 տարուց պակաս ժամկետանց	23,560	18,267	5,293	77.5%
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	514,983	43,399	471,584	8.4%
Վերանորոգման վարկեր				
- ոչ ժամկետանց	218,029	1,744	216,285	0.8%
Ընդամենը վերանորոգման վարկեր	218,029	1,744	216,285	0.8%
Ընդամենը անհատներին տրված վարկեր	1,988,873	55,187	1,933,686	2.8%
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	2,857,675	75,880	2,781,795	2.7%

«ՄԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Բիզնես վարկեր				
Վարկեր փոքր ընկերություններին և անհատ ձեռներեցներին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր				
- ոչ ժամկետանց	882,205	7,058	875,147	0.8%
- մինչև 90 օր ժամկետանց	9,874	987	8,887	10.0%
- 90 օրից ավել և 1 տարուց պակաս ժամկետանց	20,534	14,661	5,873	71.4%
Ընդամենը բիզնես վարկեր փոքր ընկերություններին և անհատ ձեռներեցներին	912,613	22,706	889,907	2.5%
Անհատներին տրված վարկեր				
Այլ սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	456,909	3,655	453,254	0.8%
- 90 օրից ավել և 1 տարուց պակաս ժամկետանց	3,803	3,803	-	100.0%
Ընդամենը այլ սպառողական վարկեր	460,712	7,458	453,254	1.6%
Գյուղատնտեսական վարկեր				
- ոչ ժամկետանց	563,218	4,506	558,712	0.8%
- մինչև 90 օր ժամկետանց	43,963	7,572	36,391	17.2%
- 90 օրից ավել և 1 տարուց պակաս ժամկետանց	42,233	32,128	10,105	76.1%
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	649,414	44,206	605,208	6.8%
Վերանորոգման վարկեր				
- ոչ ժամկետանց	99,986	1,500	98,486	1.5%
- 90 օրից ավել և 1 տարուց պակաս ժամկետանց	1,708	1,708	-	100.0%
Ընդամենը վերանորոգման վարկեր	101,694	3,208	98,486	3.2%
Ընդամենը անհատներին տրված վարկեր	1,211,820	54,872	1,156,948	4.5%
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	2,124,433	77,578	2,046,855	3.7%

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելը ներառում է 13,466 հազար դրամ գումարով փոփոխված պայմաններով բիզնես վարկեր (անհատներին փոփոխված պայմաններով վարկեր չեն տրամադրվել), որոնք այլապես կարող էին դառնալ ժամկետանց կամ արժեզրկված (2009թ-ին՝ համապատասխանաբար 11,344 հազար դրամ և 26,560 հազար դրամ): Նման փոփոխությունների նպատակն է կառավարել հաճախորդների հետ հարաբերությունները և առավելագույնի հասցնել վարկի հավաքագրման հնարավորությունները: Փոփոխված պայմաններով վարկերը ներառվում են արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի դասում վերը ներկայացված աղյուսակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ վարկառու չի կատարում փոփոխված պայմանները:

(բ) Վարկերի արժեզրկման գնահատման համար կիրառվող հիմնական ենթադրությունները և դատողությունները

(i) Բիզնես վարկեր

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է աժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Բիզնես վարկերի արժեզրկման անկողմնակալ հայտանիշներ են հանդիսանում՝

- վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի շուկաներում:

Բիզնես վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս Կազմակերպությունը հիմնվում է արժեզրկված վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Բիզնես վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս՝ ղեկավարությունն առաջնորդվում հետևյալ հիմնական ենթադրություններով.

- գրավադրված գույքի վաճառքի դեպքում արժեզրկված վարկերի համար կիրառվում է 20%-30% զեղչ սկզբնապես գնահատված արժեքի գծով և գրավի իրացումից մուտքերի ստացումը հետաձգվում է 12-ից 24 ամսով:
- ոչ արժեզրկված վարկերի համար հավաքական արժեզրկման գծով պահուստը հիմնվում է վնասի տեղաշարժի դրույքների վրա, որոնք կայուն են և կարող են գնահատվել վերջին 36 ամիսների ընթացքում կրած կորուստների միգրացիայի մոդելի հիման վրա:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Օրինակ՝ եթե դրամական միջոցների գնահատատված հոսքերի զուտ ներկա արժեքը փոփոխվի մեկ տոկոսով, ապա բիզնես վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կավելանա 8,481 հազար դրամով (31 դեկտեմբերի 2009թ.՝ 8,899 հազար դրամով):

(ii) Անհատներին տրված վարկեր

Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումը գնահատելիս Կազմակերպությունը հիմնվում է յուրաքանչյուր տեսակի վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա: Անհատներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով՝

- գրավադրված գույքի վաճառքի դեպքում արժեզրկված վարկերի համար կիրառվում է 20%-30% զեղչ սկզբնապես գնահատված արժեքի գծով և գրավի իրացումից մուտքերի ստացումը հետաձգվում է 12-ից 24 ամսով:
- ոչ արժեզրկված վարկերի համար հավաքական արժեզրկման գծով պահուստը հիմնվում է վնասի տեղաշարժի դրույքների վրա, որոնք կայուն են և կարող են գնահատվել վերջին 36 ամիսների ընթացքում կրած կորուստների միգրացիայի մոդելի հիման վրա:
- անհատներին տրված ավելի քան 180 օր ժամկետանց վարկերի գծով գրանցվում է վնաս կրելու 100% հավանակություն:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Օրինակ՝ եթե դրամական միջոցների գնահատատված հոսքերի գուտ ներկա արժեքը փոփոխվի երեք տոկոսով, ապա անհատներին տրված վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կավելանա 58,010 հազար դրամով (31 դեկտեմբերի 2009թ.՝ 34,708 հազար դրամով):

(գ) Գրավի վերլուծություն

(i) Բիզնես վարկեր

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է բիզնես վարկերի վերլուծությունը (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների 2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2010թ. հազ. դրամ	Վարկային սյորտֆելի %	2009թ. հազ. դրամ	Վարկային սյորտֆելի %
Անշարժ գույք	726,537	86%	884,403	99%
Անձնական երաշխիքներ	105,364	12%	-	-
Փոխադրամիջոցներ	2,759	0%	5,504	1%
Այլ գրավ	13,449	2%	-	-
	848,109	100%	889,907	100%

Վերը աղյուսակում բերվող գումարներն իրենցից ներկայացնում են վարկերի հաշվեկշռային արժեքը և պարտադիր չէ, որ արտացոլեն գրավի իրական արժեքը:

69,992 հազար դրամ ընդհանուր արժեքով արժեզրկված կամ ժամկետանց բիզնես վարկերը (2009թ-ին՝ 30,408 հազար դրամ) ապահովված են 106,140 հազար դրամ (2009թ-ին՝ 61,209 հազար դրամ) իրական արժեքով գրավով:

2010թ. ընթացքում Կազմակերպությունը ձեռք չի բերել ակտիվներ՝ բիզնես վարկերի դիմաց ընդունված գրավի նկատմամբ վերահսկողության իրավունք ստանալու միջոցով (31 դեկտեմբերի 2009թ.՝ նման ակտիվներ չեն եղել):

(ii) Անհատներին տրված վարկեր

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է անհատներին տրված վարկերի վերլուծությունը (առանց արժեզրկման)՝ ըստ գրավի տեսակների 2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2010թ. հազ. դրամ	Վարկային սյորտֆելի %	2009թ. հազ. դրամ	Վարկային սյորտֆելի %
Սպառողական սարքավորումներ	682,040	35%	-	-
Անշարժ գույք	608,318	31%	472,507	41%
Ոսկու գրավ	553,370	29%	432,177	37%
Ընտանի կենդանիներ	46,394	3%	201,946	18%
Փոխադրամիջոցներ	28,554	1%	50,318	4%
Այլ գրավ	15,010	1%	-	-
	1,933,686	100%	1,156,948	100%

Վերը աղյուսակում բերվող գումարներն իրենցից ներկայացնում են վարկերի հաշվեկշռային արժեքը և պարտադիր չէ, որ արտացոլեն գրավի իրական արժեքը:

Սպառողական ապարանքների ձեռքբերումը ֆինանսավորելու համար տրված վարկերը ապահովված են ձեռք բերվող սպառողական սարքավորումներով: Այլ սպառողական վարկերն ապահովված են ոսկու գրավով: Գյուղատնտեսական վարկերի դիմաց գրավադրված է անշարժ գույք, փոխադրամիջոցներ և ընտանի կենդանիներ: Վերանորոգման վարկերի համար գրավ է հանդիսանում համապատասխան անշարժ գույքը:

42,172 հազար դրամ ընդհանուր արժեքով արժեզրկված կան ժամկետանց անհատներին տրված վարկերը (2009թ-ին՝ 91,707 հազար դրամ) ապահովված են 119,925 հազար դրամ (2009թ-ին՝ 228,654 հազար դրամ) իրական արժեքով գրավով:

(դ) Վարկային պորտֆելի աշխարհագրական և ըստ տնտեսության ճյուղերի վերլուծություն

Վարկերը տրամադրվել են հիմնականում Հայաստանի Հանրապետությունում գտնվող հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են տնտեսության հետևյալ ճյուղերում.

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Անհատներին տրված վարկեր, բացառությամբ գյուղատնտեսական վարկերի	1,473,890	562,406
Առևտուր	613,526	694,198
Գյուղատնտեսություն	514,983	649,414
Սննդի արտադրություն	128,016	99,816
Թեթև արդյունաբերություն	65,390	33,631
Արդյունաբերություն	32,384	47,867
Այլ	29,486	37,101
	2,857,675	2,124,433
Արժեզրկման գծով պահուստ	(75,880)	(77,578)
	2,781,795	2,046,855

(ե) Վարկային ռիսկին ենթարկվածություն

2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի վարկառու կամ կապակցված վարկառուների խմբեր, որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

(զ) Վարկերի ժամկետայնություն

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 17-ում, որտեղ արտացոլված է հաշվետու ամսաթվից մինչև վարկերի պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը: Քանի որ Կազմակերպությունը տրամադրում է կարճաժամկետ վարկեր, հավանական է, որ դրանցից շատերը կերկարաձգվեն ժամկետի ավարտից հետո: Այդ իսկ պատճառով, վարկային պորտֆելի իրական ժամկետայնությունը կարող է զգալիորեն երկար լինել պայմանագրային պայմանների հիման վրա որոշված ժամկետայնությունից:

13 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Շենքեր	Համակարգչ. սարք.	Փոխադրա-միջոցներ	Համակարգչ. ծրագրեր	Վարձակալված գույքի բարելավումներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք/Վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	825	17,171	51,244	19,995	22,477	26,961	138,673
Ավելացումներ	-	12,665	-	-	-	14,692	27,357
Օտարումներ	(825)	(85)	-	-	-	(67)	(977)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	-	29,751	51,244	19,995	22,477	41,586	165,053
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2010թ.	371	6,877	16,594	7,915	12,455	11,759	55,971
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	41	7,323	7,037	2,006	5,012	7,000	28,419
Օտարումներ	(412)	(30)	-	-	-	(40)	(482)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010թ.	-	14,170	23,631	9,921	17,467	18,719	83,908
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2010թ.	-	15,581	27,613	10,074	5,010	22,867	81,145
Սկզբնական արժեք/Վերագնահատված արժեք							
Մնացորդը առ 1 հունվարի 2009թ.	825	32,853	38,127	20,763	22,477	24,588	139,633
Ավելացումներ	-	2,449	13,117	-	-	3,904	19,470
Վերագնահատում	-	(17,707)	-	-	-	-	(17,707)
Օտարումներ	-	(424)	-	(768)	-	(1,531)	(2,723)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.	825	17,171	51,244	19,995	22,477	26,961	138,673
Մաշվածություն և ամորտիզացիա							
Մնացորդը առ 1 հունվարի 2009թ.	330	18,097	10,962	6,351	7,258	8,165	51,163
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	41	8,532	5,632	2,082	5,197	5,091	26,575
Վերագնահատում	-	(19,340)	-	-	-	-	(19,340)
Օտարումներ	-	(412)	-	(518)	-	(1,497)	(2,427)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.	371	6,877	16,594	7,915	12,455	11,759	55,971
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2009թ.	454	10,294	34,650	12,080	10,022	15,202	82,702
Առ 1 հունվարի 2009թ.	495	14,756	27,165	14,412	15,219	16,423	88,470

2010թ. ընթացքում չեն եղել հիմնական միջոցների ձեռքբերմանը կամ շինարարությանը վերաբերող կապիտալացված փոխառության ծախսումներ (2009թ-ին՝ նման ծախսումներ չեն եղել):

(ա) Վերագնահատված ակտիվներ

2009թ-ին ղեկավարությունը Կազմակերպության մասնագետների միջոցով գնահատեց համակարգչային սարքավորումները՝ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրանց իրական արժեքը որոշելու համար: Գնահատումն իրականացվել է շուկայական մոտեցման հիման վրա: Շուկայական մոտեցումը հիմնված է նմանատիպ համակարգչային սարքավորումների վաճառքի համեմատական տվյալների վերլուծության վրա: Գեկավարությունը գտնում է, որ համակարգչային սարքավորումների 2010թ. իրական արժեքը էականորեն չի տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքից տարեվերջի դրությամբ:

Եթե վերագնահատում չիրականացվեր, ապա 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգչային սարքավորումների հաշվեկշռային արժեքը կկազմեր 14,749 հազար դրամ (31 դեկտեմբերի 2009թ.՝ 8,655 հազար դրամ):

14 Վարկեր և փոխառություններ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Կազմակերպության ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Կազմակերպության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 17-ում:

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		
Գ-րավով ապահովված բանկային վարկեր	47,372	46,773
Գ-րավով ապահովված վարկեր այլ կազմակերպություններից	6,578	1,679
Գ-րավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	30,071	226,734
	84,021	275,186
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>		
Գ-րավով ապահովված բանկային վարկեր	-	295,512
Գ-րավով ապահովված վարկեր այլ կազմակերպություններից	14,691	1,664
Գ-րավով չապահովված բանկային վարկեր	164,534	-
Գ-րավով չապահովված վարկեր կապակցված կողմերից	505,748	525,527
Գ-րավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	1,494,578	1,356,524
	2,179,551	2,179,227
	2,263,572	2,454,413

«ՄԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների համար գործող պայմանները:

հազ. դրամ	Արժույթ	Անվանակ տոկոսադր.	Մարման տարին	2010թ.		2009թ.	
				Անվանակ. արժեք*	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք*	Հաշվեկշռ. արժեք
Գրավով ապահովված բանկային վարկեր	ՀՀ դրամ	8.0%	2012	47,372	47,372	46,773	46,773
Գրավով ապահովված բանկային վարկեր	ՀՀ դրամ	8.0%	2010	-	-	295,512	295,512
Գրավով ապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ՀՀ դրամ	ՀՀ ԿԲ ռեպո+2%	2011-2013	21,269	21,269	3,343	3,343
Գրավով չապահովված բանկային վարկեր	ԱՄՆ դոլար	10.0%	2011	164,534	164,534	-	-
Գրավով չապահովված վարկեր կապակցված կողմերից	ԱՄՆ դոլար	5.0%	2010	-	-	94,486	94,486
Գրավով չապահովված վարկեր կապակցված կողմերից	ԱՄՆ դոլար	10.6%	2011	91,189	91,189	-	-
Գրավով չապահովված վարկեր կապակցված կողմերից	ԱՄՆ դոլար	10.3%	2011	414,559	414,559	431,041	431,041
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	8.9%	2012	168,031	168,031	-	-
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	11.4%	2011	285,947	285,947	297,227	297,227
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	9.7%	2011	224,749	224,749	467,248	467,248
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից**	ԱՄՆ դոլար	0.0%	2012-2013	72,547	65,362	-	-
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	9.4%	2011	91,122	91,122	-	-
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ՀՀ դրամ	10.5%	2012	4,300	4,300	-	-
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	9.1%	2012	254,666	254,666	-	-
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	9.5%	2012	370,101	370,101	-	-
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ՀՀ դրամ	15.0%	2011	60,371	60,371	-	-
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	10.0%	2010	-	-	381,998	381,998
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	11.1%	2010	-	-	171,048	171,048
Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	ԱՄՆ դոլար	10.4%	2010	-	-	265,737	265,737
				2,270,757	2,263,572	2,454,413	2,454,413

* Աղյուսակում նշված անվանական արժեքը ներառում է մայր գումարը և հաշվեգրված տոկոսները:

** Այլ կազմակերպություններից ստացված գրավով չապահովված վարկերը ներառում են զրո տոկոսադրույքով վարկ, որը ճանաչվել է իրական արժեքով՝ կիրառելով մնանաստիպ գործիքների համար գործող շուկայական տոկոսադրույքները:

Բանկային վարկերի դիմաց գրավադրված են 61,785 հազար դրամ գումարով (2009թ-ին՝ 472,363 հազար դրամ) նույն բանկում նմանատիպ պայմաններով տեղաբաշխված ժամկետային ավանդները, որոնք ներկայացված են ծանոթագրություն 11-ում: Կազմակերպությունը հաշվառում է ժամկետային ավանդներով ապահովված վարկերը համախառն հիմունքով, քանի որ դեկավարությունը գտնում է, որ՝

- նման հաշվառումը թույլ է տալիս ապահովել Կազմակերպության դրամական միջոցների հոսքերի առավել ճշգրիտ ներկայացում,
- Կազմակերպությունը չունի այս ժամկետային ավանդները վարկերի դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք:

Վարկերի և փոխառությունների կենտրոնացում

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունն ուներ վարկեր և փոխառություններ վեց կազմակերպություններից, որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում է 1,917,766 հազար դրամ (2009թ-ին՝ 2,451,070 հազար դրամ):

Պայմանագրային սահմանափակումների խախտում

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը խախտել էր այլ կազմակերպություններից ստացված գրավով չապահովված երկու վարկերի սահմանափակումները: Նշված փոխառությունների պայմանագրերի պայմանների համաձայն Կազմակերպությունն իրավունք չունի հատկացնել, փոխանցել, գրավադրել, պարտքերով ծանրաբեռնել կամ տրամադրել որևէ տեսակի ապահովություն իր վարկային պորտֆելի հետ կապված: 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 21,269 հազար դրամ ընդհանուր գումարով հաճախորդներին տրված վարկերը ծառայել են որպես գրավ այլ կազմակերպություններից ստացված գրավով ապահովված վարկերի դիմաց: Վերը նշվածի արդյունքում Կազմակերպությունը խախտում է նաև այլ կազմակերպություններից ստացված երեք վարկերի փոխկապակցված սահմանափակումները: Այն վարկերի ընդհանուր գումարը, որոնց սահմանափակումները խախտվում են, կազմում է 1,169,866 հազար դրամ:

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ վարկատուները չեն պահանջել փոխառությունների մարում և նշել են, որ չեն պահանջի փոխառությունների առավել վաղ մարում, քանի որ գրավադրված գումարն էական չէ նրանց համար:

Վերը նշվածի հիման վրա Կազմակերպությունը վերադասակարգում է սահմանափակումների խախտումներով 781,396 հազար դրամ գումարով վարկը որպես ընթացիկ պարտավորություն ծանոթագրություն 14-ում և որպես ըստ պահանջի վճարման ենթակա պարտավորություն ծանոթագրություն 17-ի (դ) կետում՝ ժամկետայնության վերլուծություն բաժնում՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի: Կազմակերպությունը չի ակնկալում, որ վարկատուները կպահանջեն փոխառությունների առավել վաղ մարում և ճանաչում է այդ փոխառություններն ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների ծանոթագրություն 17-ի (բ) կետի (i) ենթակետում՝ տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն բաժնում և ծանոթագրություն 17-ի (դ) կետում՝ ժամկետայնության վերլուծությունում բաժնում:

15 Այլ պարտավորություններ

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Մանրաձախ խանութներին վճարվելիք գումարներ	39,703	-
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	30,673	22,899
Մատակարարներին վճարվելիք գումարներ	10,890	12,417
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	81,266	35,316
Կանխավճար մայր ընկերությունից ստացված վարկի դիմաց	45,105	-
Շնորհներ	16,325	25,429
Այլ վճարվելիք հարկեր	2,406	8,201
Այլ	11,269	2,237
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	75,105	35,867
Ընդամենը այլ պարտավորություններ	156,371	71,183

16 Բաժնետիրական կապիտալ

(ա) Թողարկված կապիտալ

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 100 սովորական բաժնետոմսից (2009թ-ին՝ 100): Բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 8,296,520 դրամ (2009թ-ին՝ 7,649,680 դրամ):

2010թ. ընթացքում բաժնետիրական կապիտալը համարվեց 64,684 հազար դրամով շնորհիվ բաժնետերերի կողմից տրամադրված միջոցների: Արդյունքում, սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը 7,649,680 դրամից աճեց 8,296,520 դրամի:

2009թ-ին բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով ստացված վարկերի մարումը չեղյալ էր համարվել և այդ վարկերը վերադասակարգվել էին բաժնետիրական կապիտալի: Արդյունքում, վերը նշված բաժնետիրական կապիտալը ավելացավ վարկի 240,562 հազար դրամ հաշվեկշռային արժեքի և 12,246 հազար դրամ լրացուցիչ կապիտալի չափով: Սրա հետևանքով սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը 5,121,600 դրամից աճեց 7,649,680 դրամի:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել մեկ բաժնետոմս - մեկ ձայն սկզբունքով:

(բ) Լրացուցիչ կապիտալ

2010թ. ընթացքում բաժնետերը կատարել է 75,730 հազար դրամ գումարով կանխավճար բաժնետիրական կապիտալի գծով, որը դասակարգվել է որպես լրացուցիչ կապիտալ:

(գ) Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված առավելագույն չբաշխված շահույթի չափով: Կազմակերպության կանոնադրության համաձայն, հաշվետու ամսաթվի դրությամբ բաշխման ենթակա պահուստները կազմում են 28,760 հազար դրամ (2009թ-ին՝ 25,816 հազար դրամ):

Հաշվետու ամսաթվի դրությամբ և 2010թ. դեկտեմբերի 31-ից հետո շահաբաժիններ չեն հայտարարվել:

17 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն էական գործոն է վարկային կազմակերպությունների համար և Կազմակերպության գործառնությունների կարևոր տարր է: Շուկայական ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Ղեկավար խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման համար:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե պորտֆելի և թե առանձին գործառնությունների մակարդակով, կառավարվում ու վերահսկվում են Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (ԱՊԿԿ) և Վարկային կոմիտեի կողմից:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Կազմակերպությունը կառավարում է շուկայական ռիսկը սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր տոկոսադրույքների, ժամկետայնության և արտարժույթի դիրքերի գծով: Դրանք կանոնավոր կերպով վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են ԱՊԿԿ-ի կողմից:

(i) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Կազմակերպությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների փոփոխությունների մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար:

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Հաշվեկշռային արժեք
31 դեկտեմբերի 2010թ.					
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	146,859	-	-	-	146,859
Ժամկետային ավանդներ բանկերում	254,466	-	-	67,490	321,956
Հաճախորդներին տրված վարկեր	430,286	431,614	761,263	1,158,632	2,781,795
	831,611	431,614	761,263	1,226,122	3,250,610
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Վարկեր և փոխառություններ	490,535	515,167	398,774	859,096	2,263,572
Տարբերություն	341,076	(83,553)	362,489	367,026	987,038
31 դեկտեմբերի 2009թ.					
ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	103,252	-	-	-	103,252
Ժամկետային ավանդներ բանկերում	404,409	610,658	-	66,947	1,082,014
Հաճախորդներին տրված վարկեր	330,051	339,980	647,380	729,444	2,046,855
	837,712	950,638	647,380	796,391	3,232,121
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Վարկեր և փոխառություններ	907,138	893,312	378,777	275,186	2,454,413
Տարբերություն	(69,426)	57,326	268,603	521,205	777,708

Միջին տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2010թ.		2009թ.	
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		Միջին արդյունավետ տոկոսադրույք, %	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ				
Ժամկետային ավանդներ բանկերում	-	2.4%	8.1%	5.7%
Հաճախորդներին տրված վարկեր	24.0%	20.5%	21.6%	22.0%
Տոկոսակիր պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ				
- Գրավով ապահովված բանկային վարկեր	7.9%	-	8.0%	-
- Գրավով ապահովված վարկեր այլ կազմակերպություններից	9.3%	-	7.5%	-
- Գրավով չապահովված բանկային վարկեր	-	10.0%	-	-
- Գրավով չապահովված վարկեր այլ կազմակերպություններից	14.7%	9.3%	-	10.4%
- Գրավով չապահովված վարկեր կապակցված կողմերից	-	10.4%	-	9.4%

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի վերանայման ժամկետների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով: Ստորև ներկայացվում է շուկայական տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 տոկոսային կետով (տկ) շահութաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2010թ. ու 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

	2010թ.		2009թ.	
	Շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ	Շահույթ կամ վնաս հազ. դրամ	Սեփական կապիտալ հազ. դրամ
100 տկ զուգահեռ նվազում	(2,356)	(2,356)	(5,401)	(5,401)
100 տկ զուգահեռ աճ	2,356	2,356	5,401	5,401

(ii) Արտարժույթի ռիսկ

Կազմակերպությունն ունի ԱՄՆ դոլարով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Արտարժույթով արտահայտված արտաքին ֆինանսավորումը մասնակիորեն հեջավորվում է փոխառարժ փոխհատուցվող գործառնությունների կամ արտարժույթով վարկավորման միջոցով՝ ապահովելով արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների համապատասխանությունը: Ֆինանսավորման աղբյուրների աճի պայմաններում Կազմակերպությունը կրացահայտի ռիսկի ընդունելի մակարդակը, մասնավորապես, սահմանափակելով արտարժույթի զուտ դիրքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը մինչև 0.35 որոշակի ժամանակահատվածի ընթացքում, որի արդյունքում հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների անհամապատասխանության ռիսկը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	ԱՄՆ դոլար 2010թ.	ԱՄՆ դոլար 2009թ.
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	52,199	57,641
Ժամկետային ավանդներ բանկերում	321,956	874,668
Հաճախորդներին տրված վարկեր	1,520,124	1,303,563
Ընդամենը ակտիվներ	1,894,279	2,235,872
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Վարկեր և փոխառություններ	2,130,261	2,108,785
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-
Ընդամենը պարտավորություններ	2,130,261	2,108,785
Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի	(235,982)	127,087

2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի թուլացումը ստորև նշված արտարժույթի նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

	2010թ. Շահույթ կամ վնաս հազ. դրամ	2009թ. Շահույթ կամ վնաս հազ. դրամ
ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% արժեվորում ՀՀ դրամի նկատմամբ	(23,598)	12,709

2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ամրապնդումը վերոնշյալ արտարժույթի նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն շահույթի կամ վնասի վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Կազմակերպության նկատմամբ: Կազմակերպությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր վարկային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար, ներառյալ պորտֆելի կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Վարկային կոմիտեի ստեղծումը, որնք ակտիվորեն վերահսկում են վարկային ռիսկը: Կազմակերպության վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Դեկավար խորհրդի կողմից:

Վարկային քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների (իրավաբանական անձանց և անհատների) վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- պայմանագրային կողմերի վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը,
- վարկային փաստաթղթերի պահանջները,
- վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Վարկային ռիսկը հիմնականում առաջանում է վարկավորման գործունեության հետ կապված, հանգեցնելով վարկերի ու փոխատվությունների տրամադրմանը, ինչպես նաև ընթացիկ հաշիվներում և ժամկետային ավանդներում միջոցների տեղաբաշխմանը: Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը կենտրոնացված է Վարկային կոմիտեում, իսկ վարկային ռիսկի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են Դեկավար խորհրդին:

Վարկային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների գծով ռիսկի առավելագույն աստիճանը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	139,993	99,260
Ժամկետային ավանդներ բանկերում	321,956	1,082,014
Հաճախորդներին տրված վարկեր	2,781,795	2,046,855
Այլ ֆինանսական ակտիվներ	1,733	1,468
Վարկային ռիսկի ընդհանուր առավելագույն չափը	3,245,477	3,229,597

Հաճախորդներին տրված վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացվածության վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 12-ում:

Չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների գծով վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացված է ծանոթագրություն 19-ում:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի որևէ պարտապան կամ կապակցված պարտապանների խմբեր (2009թ-ին՝ երկու պարտապան), որոնց հետ կապված վարկային ռիսկը գերազանցում է ընդհանուր վարկային ռիսկի 10%-ը: 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս հաճախորդների հետ կապված վարկային ռիսկի կենտրոնացում չի դիտվում (2009թ-ին՝ 835,193 հազար դրամ):

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Կազմակերպությունը կունենա դժվարություններ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման էական գործոն: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը սովորական չէ ֆինանսական կազմակերպությունների համար՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթությամբ և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել վնաս կրելու ռիսկը:

Կազմակերպության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Կազմակերպության իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է Ղեկավար խորհրդի կողմից:

Կազմակերպությունը ձգտում է ակտիվորեն պահպանել ֆինանսավորման աղբյուրների տարբերակված և կայուն կառուցվածքը, որը ներառում է բանկերից և այլ վարկավորող կազմակերպություններից ստացված երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերը՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջներն արագ ու հեշտությամբ բավարարելու համար:

Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը պահանջում է.

- դրամական միջոցների հոսքերի կանխատեսում՝ ըստ հիմնական արտարժույթների և դրամական միջոցների այս հոսքերի հետ կապված պահանջվող իրացվելի ակտիվների մակարդակի դիտարկում,
- պարտքերի կենտրոնացման և կառուցվածքի կառավարում,
- պարտքերի ֆինանսավորման ծրագրերի ապահովում,
- բարձր իրացվելի ակտիվների պորտֆելի պահպանում, որը կարելի է հեշտությամբ իրացնել որպես ապահովություն դրամական միջոցների ներհոսքի դադարեցման դեպքում,
- օրենսդրական պահանջների հետ իրացվելիության ցուցանիշների համապատասխանության վերահսկում:

Ստորև բերվող աղյուսակներում ներկայացված են ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների, ներառյալ չճանաչված վարկավորման պարտավորվածությունների գծով դրամական միջոցների չգեղջված հոսքերը՝ ըստ պայմանագրով սահմանված առավել վաղ մարման ժամկետի:

«ՄԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ Այլ ֆինանսական պարտավորություններ	1,338,351	299,934	440,375	141,638	90,026	2,310,324	2,263,572
Ընդամենը պարտավորություններ	1,388,944	299,934	440,375	172,311	90,026	2,391,590	2,344,838
Վարկավորման պարտավորվածություն.	804,859						

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Արտահոսքի ընդհանուր համախառն գումար	Հաշվեկշռ. արժեք
Ոչ ածանցյալ պարտավորություններ							
Վարկեր և փոխառություններ Այլ ֆինանսական պարտավորություններ	733,055	209,171	949,395	444,358	353,999	2,689,978	2,454,413
Ընդամենը պարտավորություններ	737,610	209,171	957,442	467,072	353,999	2,725,294	2,489,729
Վարկավորման պարտավորվածություն.	918,758						

«ՄԵՖ Ինտերնեյշնլ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ
 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

	Ցյախանց և մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	Անժամկետ հազ. դրամ	Ժամկետանց հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	146,859	-	-	-	-	-	146,859
Ժամկետային ավանդներ բանկերում	164,667	89,799	-	67,490	-	-	321,956
Հաճախորդներին տրված վարկեր	144,799	285,487	1,192,877	1,125,826	-	32,806	2,781,795
Ընթացիկ հարկային ակտիվ	-	-	8,292	-	-	-	8,291
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	81,145	-	81,145
Հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-	9,739	-	9,739
Այլ ակտիվներ	11,930	-	-	-	-	-	11,931
Ընդամենը ակտիվներ	468,255	375,286	1,201,169	1,193,316	90,884	32,806	3,361,716
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Վարկեր և փոխառություններ	192,263	280,415	925,220	865,674	-	-	2,263,572
Այլ պարտավորություններ	56,011	-	34,136	66,224	-	-	156,371
Ընդամենը պարտավորություններ	248,274	280,415	959,356	931,898	-	-	2,419,943
Ջուտ դիրքը	219,981	94,871	241,813	261,418	90,884	32,806	941,773

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված գումարների վերլուծությունն ըստ մարման ակնկալվող ժամկետների:

	Ցյախանց և մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	Անժամկետ հազ. դրամ	Ժամկետանց հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	103,252	-	-	-	-	-	103,252
Ժամկետային ավանդներ բանկերում	56,477	347,932	610,658	66,947	-	-	1,082,014
Հաճախորդներին տրված վարկեր	120,242	209,809	987,360	665,633	-	63,811	2,046,855
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	82,702	-	82,702
Հետաձգված հարկային ակտիվ	-	-	-	-	10,056	-	10,056
Այլ ակտիվներ	7,363	-	-	-	-	-	7,363
Ընդամենը ակտիվներ	287,334	557,741	1,598,018	732,580	92,758	63,811	3,332,242
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
Վարկեր և փոխառություններ	728,369	178,769	1,272,089	275,186	-	-	2,454,413
Ընթացիկ հարկային պարտավորություն	7,586	-	-	-	-	-	7,586
Այլ պարտավորություններ	13,125	4,325	33,372	20,361	-	-	71,183
Ընդամենը պարտավորություններ	749,080	183,094	1,305,461	295,547	-	-	2,533,182
Ջուտ դիրքը	(461,746)	374,647	292,557	437,033	92,758	63,811	799,060

Իրացվելիության ռիսկի կառավարման համար Կազմակերպության կողմից օգտագործվող հիմնական միջոցն իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների, ընթացիկ հարաբերակցության և արագ հարաբերակցության կիրառումն է: Այս նպատակով իրացվելի ակտիվների հարաբերակցությունը հաշվարկելու համար դրամական միջոցները և դրանց համարժեքները բաժանվում են ընդհանուր ակտիվների, ընթացիկ հարաբերակցությունը հաշվարկելու համար ընթացիկ ակտիվները բաժանում են ընթացիկ պարտավարությունների և արագ հարաբերակցությունը հաշվարկելու համար դրամական միջոցները և դրանց համարժեքները բաժանվում են ընթացիկ պարտավարությունների: Ստորև ներկայացված են հարաբերակցությունները 2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	<u>2010թ.</u>	<u>2009թ.</u>
Իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցություն	4%	3%
Ընթացիկ հարաբերակցություն	0.90	1.09
Արագ հարաբերակցություն	0.06	0.05

18 Կապիտալի կառավարում

Կազմակերպության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Կազմակերպության կապիտալը ներառում է տեղական օրենսդրությամբ վարկային կազմակերպությունների համար սահմանված բաղկացուցիչ հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն վարկային կազմակերպությունները պետք է ապահովեն 150,000 հազար դրամի չափով նվազագույն բաժնետիրական կապիտալ և ընդհանուր կապիտալ: 2010թ. և 2009թ. ընթացքում Կազմակերպության բավարարում էր կապիտալին վերաբերող օրենսդրության պահանջները: Ի լրումն, Կազմակերպությունը կառավարում է իր կապիտալը պայմանագրային սահմանափակումների պահանջներին համապատասխանելու նպատակով:

Ստորև ներկայացված է Կազմակերպության պարտավորությունների և կապիտալի հարաբերակցությունը հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ:

	<u>2010թ.</u>	<u>2009թ.</u>
	<u>հազ. դրամ</u>	<u>հազ. դրամ</u>
Ընդամենը պարտավորություններ	<u>2,419,943</u>	<u>2,533,182</u>
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	<u>(146,859)</u>	<u>(103,252)</u>
Զուտ պարտքը	<u>2,273,084</u>	<u>2,429,930</u>
Ընդամենը սեփական կապիտալ	<u>941,773</u>	<u>799,060</u>
Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>2.41</u>	<u>3.04</u>

Կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Կազմակերպության մոտեցումը տարվա ընթացքում չի փոփոխվել:

19 Պարտավորվածություններ

Կազմակերպությունն ունի վարկեր տրամադրելու պարտավորվածություններ: Այս պարտավորվածություններն իրենցից ներկայացնում են հաստատված վարկեր:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են պարտավորվածությունների պայմանագրային գումարներն ըստ դասերի: Աղյուսակում արտացոլված պարտավորվածությունների գումարները ենթադրում են, որ գումարներն ամբողջովին տրամադրված են:

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Չօգտագործված վարկային պարտավորվածություններ - պայմանագրային գումար	804,859	918,758

Վարկավորման վերը ներկայացված ընդհանուր պարտավորվածությունները չեն ենթադրում դրամական միջոցների գծով ապագա պահանջներ, քանի որ այս պարտավորվածությունները կարող են ուժը կորցնել կամ դադարել գործել մինչև վերջիններիս կատարման ժամկետը:

Այս պարտավորվածությունները ռիսկային չեն Կազմակերպության համար:

20 Գործառնական վարձակալություն

(ա) Վարձակալություն, որտեղ Կազմակերպությունը հանդես է գալիս որպես վարձակալ

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են.

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Մինչև մեկ տարի ժամկետով	42,825	21,494
Մեկից հինգ տարի ժամկետով	81,514	32,652
	124,339	54,146

Կազմակերպությունը վարձակալում է մի շարք տարածքներ և սարքավորումներ գործառնական վարձակալության պայմաններով: Վարձակալության սկզբնական ժամկետը սովորաբար կազմում է մինչև հինգ տարի՝ այդ ժամկետից հետո վարձակալության պայմանագիրը նորացնելու հնարավորությամբ: Վարձավճարների չափը սովորաբար ավելանում է տարեկան կտրվածքով՝ շուկայի միտումներն արտացոլելու նպատակով: Այս վարձակալություններից ոչ մեկը պայմանական ռենտա չի ներառում:

2010թ. ընթացքում գործառնական վարձակալության գծով ճանաչվել է 37,221 հազար դրամ գումարով ծախս շահույթում կամ վնասում (2009թ-ին՝ 20,798 հազար դրամ):

21 Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Կազմակերպության շենքերն ու սարքավորումները ապահովագրված չեն: Կազմակերպությունն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Կազմակերպության տարածքում տեղի ունեցած կամ նրա գործունեությանը վերաբերող պատահարներից: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել խիստ տույժեր, տուգանքներ և տոկոսագումարներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել Կազմակերպության ֆինանսական վիճակի համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

22 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Կազմակերպության մայր ընկերությունն է հանդիսանում «Վիժն Ֆանդ Ինտերնեյշնլը»: Կազմակերպության վերջնական վերահսկող կողմն է համարվում «Վորլդ Վիժն Ինտերնեյշնլը»: Կազմակերպության մայր ընկերությունը չի ներկայացնում հանրությանը մատչելի ֆինանսական հաշվետվություններ: Այդ հաշվետվությունները ներկայացնում է Կազմակերպության վերջնական վերահսկող կողմը:

(բ) Գործարքներ ղեկավարության հետ

Ստորև աղյուսակում ներկայացված են Կազմակերպության ղեկավարության հետ գործարքները և մնացորդները դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	2010թ. հազ. դրամ	2009թ. հազ. դրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն		
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Այլ պարտավորություններ	7,839	6,521
Շահույթ (վնաս)		
Աշխատակիցների հատուցումներ	49,978	50,900

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Այլ կապակցված կողմերը ներառում են Կազմակերպության վերջնական վերահսկող կողմը, մայր ընկերությունը և վերջնական վերահսկող կողմի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները: Ստորև ներկայացված են 2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ գործարքների մնացորդները և համապատասխան միջին տոկոսադրույքները, ինչպես նաև 2010թ. և 2009թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	2010թ. հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %	2009թ. հազ. դրամ	Միջին տոկոսադրույք, %
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Վարկեր և փոխառություններ	505,748	10.37	525,527	9.37
Այլ պարտավորություններ	45,105	-	-	-
Շահույթ (վնաս)				
Տոկոսային ծախս	46,746		62,068	

23 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ. իրական արժեք և հաշվապահական հաշվառման դասակարգում

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային և իրական արժեքները 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Այլ անորոշիվացված արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	146,859	-	146,859	146,859
Ժամկետային ավանդներ բանկերում	321,956	-	321,956	321,956
Հաճախորդներին տրված վարկեր				
Բիզնես վարկեր	848,109	-	848,109	848,109
Անհատներին տրված վարկեր	1,933,686	-	1,933,686	1,933,686
Այլ ֆինանսական ակտիվներ	1,733	-	1,733	1,733
	3,252,343	-	3,252,343	3,252,343
Վարկեր և փոխառություններ	-	2,263,572	2,263,572	2,263,572
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	81,266	81,266	81,266
	-	2,344,838	2,344,838	2,344,838

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային և իրական արժեքները 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

հազ. դրամ	Վարկեր և դեբիտորական պարտքեր	Այլ անորոշիվացված արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	103,252	-	103,252	103,252
Ժամկետային ավանդներ բանկերում	1,082,014	-	1,082,014	1,082,014
Հաճախորդներին տրված վարկեր				
Բիզնես վարկեր	889,907	-	889,907	889,907
Անհատներին տրված վարկեր	1,156,948	-	1,156,948	1,156,948
Այլ ֆինանսական ակտիվներ	1,468	-	1,468	1,468
	3,233,589	-	3,233,589	3,233,589
Վարկեր և փոխառություններ	-	2,454,413	2,454,413	2,454,413
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	35,316	35,316	35,316
	-	2,489,729	2,489,729	2,489,729

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են կիրառելով դրամական միջոցների զեղչված հոսքերի մեթոդը դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի հիման վրա՝ օգտագործելով հաշվետու ամսաբալի դրությամբ մնանատիպ պայմաններով գործիքի նկատմամբ կիրառելի զեղչման դրույքը: Բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքին:

2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չունի այնպիսի ֆինանսական գործիքներ, որոնց իրական արժեքի գնահատման մեթոդը ենթադրում է ոչ շուկայական դիտարկելի ելակետային տվյալների կիրառում:

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ, պատրաստակամ և անկախ կողմերի միջև գործարքում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես իրացվելի՝ անմիջապես ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ: